

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ը հրավիրում է աճուրդի, որը տեղի կունենա 2022թ. մայիսի 18-ին, ժամը՝ 12:00-ին ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵՆԻՄ, ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ 4 ՀԱՍՑԵՈՒՄ

ԱՃՈՒՐԴՈՎ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի 2022թ. մարտի 31-ի թիվ 89-Ա հրամանով օտարման ենթակա ՀՀ վարչապետի աշխատակազմի հաշվեկշռում հաշվառված տրանսպորտային միջոցները

Հ/Հ	Լոտի հերթական համարը	Գույքի (լոտի) անվանումը	Գույքի (լոտի) գտնվելու վայրը	Կոնտակտային տվյալներ	Գույքի (լոտի) տեխնիկական վիճակը	Գույքի (լոտի) վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ	Գույքի գնահատված արժեքը /ՀՀ դրամ/	Լոտի մեկնարկային գինը /ՀՀ դրամ/	Նախավճարը /ՀՀ դրամ/	Մասնակցության վճարը /ՀՀ դրամ/	Գույքի արժեքի որոշման համար նախատեսված գումարը /ՀՀ դրամ/
1	2	S/մ.՝ NISSAN QASHQAI 2.0	ք. Երևան Մալաթիա-Սեբաստիա, Հաղթանակ 2 փող. 79	043-00-93-43, 044-77-77-08	Ընդհանուր տեխնիկական վիճակը՝ բավարար	Թող. տարեթիվ՝ 2008թ., հ/հ՝ 110 LL 50, ն/հ.՝ SJNB01A98A086055, գույնը՝ արծաթափայլ, թափքը՝ ունիվերսալ, վազքը՝ 137 611 կմ	3 537 000	3 006 450	150 323	26 470	18 000
2	4	S/մ.՝ GMC SAVANA 5.3	ք. Երևան Բաղրամյան 26/2	055-55-02-22	Շարժիչը ենթակա է մասնակի վերանորոգման, փոխանցման տուփը՝ բավարար, թափքը ենթակա է վերանորոգման	Թող. տարեթիվ՝ 2009թ., հ/հ՝ 185 LL 50, ն/հ.՝ 1GDFG154591115185, գույնը՝ սև, թափքը՝ ունիվերսալ, վազքը՝ 196 270 կմ	10 598 000	9 008 300	450 415	38 463	18 000

* Աճուրդի կազմակերպչի անվանումը, գտնվելու վայրը՝ «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ (հասցե՝ ք.Երևան, Զաքիյան 10):

* Աճուրդի մասնակից կարող են հանդիսանալ ֆիզիկական և իրավաբանական անձինք, ինչպես նաև համայնքները (բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի), որոնք աճուրդի մասին հրապարակային ծանուցման պահից մինչև աճուրդի բացմանը նախորդող աշխատանքային օրը (ժամը՝ 17:00-ն) ներկայացրել է աճուրդի մասնակցության հայտ:

* Յուրաքանչյուր հաջորդ լոտի աճուրդը սկսվում է նախորդ լոտի աճուրդն ավարտվելուց հետո:

• Մասնակիցները վաճառվող լոտի(եր)ին կարող են ծանոթանալ սույն ծանուցման հրապարակման պահից մինչև աճուրդի բացմանը նախորդող օրը ընկած ժամանակահատվածում՝ ք. Երևան Մալաթիա-Սեբաստիա, Հաղթանակ 2-րդ փող. 79 հասցեում յուրաքանչյուր աշխատանքային օր՝ ժամը 10:00-17:00-ն, շաբաթ օրերին՝ մինչև ժամը 13:00-ն, իսկ ք. Երևան Բաղրամյան 26/2 հասցեում յուրաքանչյուր աշխատանքային օր՝ ժամը 9:00-18:00-ն: Լրացուցիչ տեղեկատվություն ստանալու համար զանգահարել աղյուսակում նշված հեռախոսահամարներով:

Կազմակերպիչը պարտավորված է կրում աճուրդի ներկայացված լոտի (լոտեր) որակի համար: Աճուրդում գործում է հետևյալ սկզբունքը՝ «աճուրդի մասնակիցը «տեսել-համաձայնել է»:

Աճուրդի մասնակցության հայտերի ներկայացնելը և պայմանները՝

* Աճուրդին կարող են մասնակցել այն անձինք, ովքեր վաճառվող լոտի նկատմամբ կարող են ունենալ սեփականության իրավունք, ինչպես նաև սահմանված ժամկետում կազմակերպչին են ներկայացրել աճուրդի մասնակցության հայտ՝ աճուրդի մասնակցության համար անհրաժեշտ փաստաթղթերով:

Աճուրդի մասնակցության հայտին կից անհրաժեշտ փաստաթղթերն են՝

- նախավճարի վճարումը հաստատող անդորրագիրը (յուրաքանչյուր նախընտրած լոտի համար, պարտադիր նշելով մասնակցի անունը և ազգանունը), մուտքագրման հաշիվն է՝ ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչության թիվ 900018002171, ստացող՝ «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ, վճարման նպատակը՝ աճուրդի նախավճար՝ պարտադիր նշելով օտարման մասին որոշման (հրամանի) համարը և ամսաթիվը, լոտի հերթական համարը:

- մասնակցության վճարումը հաստատող անդորրագիրը (յուրաքանչյուր նախընտրած լոտի համար, պարտադիր նշելով մասնակցի անունը և ազգանունը), մուտքագրման հաշիվն է՝ ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչության թիվ 900018002981, ստացող՝ «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ, վճարման նպատակը՝ աճուրդի մասնակցության վճար՝ պարտադիր նշելով օտարման մասին որոշման (հրամանի) համարը և ամսաթիվը, լոտի հերթական համարը: Մասնակցության վճարը գույքի (լոտի) գնի մեջ չի ներառվում և անկախ աճուրդի արդյունքներից չի վերադարձվում:

- իրավաբանական անձանց համար՝ պետական գրանցման համարը, իսկ քաղաքացիների համար՝ նույնականացման քարտի, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ անձնագրի և սոցիալական քարտի համարը,

- հայրապարտի կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փրված լիազորագիր (եթե ածուրդին ներկայանում է լիազորված անձը)։

* Ածուրդի մասնակցության հայրը՝ ածուրդի մասնակցության համար անհրաժեշտ փաստաթղթերով ներկայացնելու դեպքում Կազմակերպիչը մասնակցին տրամադրում է մասնակցի վկայական (տոմս), որի տրամադրումը դադարեցվում է ածուրդը սկսելուց առնվազն երեսուն րոպե առաջ։

Ածուրդի մասնակցի չհամարվող անձինք և այդ անձանց գործողությունների վարքագծի կանոնները՝

- Ածուրդին կարող են ներկա գրնվել **դիպորդներ**՝ ածուրդի մասնակցի չհամարվող այն անձինք, ովքեր վճարել են մուրքի վճարը՝ 2000 ՀՀ դրամ։

- Դիպորդի տոմսերը վաճառվում են՝ «Գույքի գնահատման և ածուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ում (հասցեն՝ ք.Երևան, Զաքիյան 10), իսկ ածուրդի օրը՝ Պետական գույքի կառավարման կոմիտեում ընդհուպ մինչև ածուրդի սկսվելը (հասցեն՝ ք.Երևան Տիգրան Մեծ 4)։

- Ածուրդի մասնակիցները և մասնակցի չհամարվող անձինք ածուրդի անցկացման դահլիճում զբաղեցնում են առանձին նստավայրեր։

- **Ածուրդի մասնակիցները և մասնակցի չհամարվող անձինք պարտավոր են չխոչընդոտել ածուրդի անցկացմանն ու ենթարկվել ածուրդի կանոնակարգով սահմանված կանոններին։**

Ածուրդի անցկացման և ածուրդում հաղթողին որոշելու կարգը՝

- Ածուրդի մասնակիցների **անձնագրի և մասնակցի վկայական(ներ)ի** առկայությունը պարտադիր է, լիազորված անձի դեպքում՝ նաև **լիազորությունները հաստատող փաստաթղթերը**։

- Նախքան ածուրդի սկսվելը Կազմակերպիչը գրանցում է մասնակիցներին, ստուգելով նրանց ինքնությունը, լիազորությունները հաստատող փաստաթղթերը, ինչպես նաև ածուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված այլ փաստաթղթերը և յուրաքանչյուր մասնակցին, ներկայացված մասնակցի վկայականի (տոմսի) համարին համապատասխան, տրամադրում է քարտեր։

- Ածուրդը բացվում է հայրաբարությանմբ։ Հայրաբարության մեջ նշվում է ածուրդում վաճառվելիք լուրի անվանումը և նկարագրությունը, դրա մեկնարկային գինը, լուրի նկատմամբ սահմանափակումները, ինչպես նաև ածուրդի անցկացման ձևը, այդ թվում՝ գնային հայրեր ներկայացնելու կարգը։

- Ածուրդը անց է կացնում ածուրդավարը։ Ածուրդավարը մասնակիցներին առաջարկում է մեկնարկային գնով գնել լուրը։ Ցանկացած մասնակցի իրավունք ունի, նախքան ածուրդավարի մուրճիկի երրորդ հարվածը, ներկայացնել նոր գնային հայր (բարձրացնելով իր մասնակցության քարտը), որը պետք է գերազանցի մասնակիցների կատարած նախորդ գնային հայրը՝ նվազագույն հավելման (քայլի) չափով։

- Վերջին ամենաբարձր գնային հայր ներկայացրած մասնակիցը, ածուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է ածուրդում հաղթած մասնակից։

- Եթե մի քանի մասնակցի միաժամանակ գնային հայր են ներկայացրել հավասար չափով, որից հետո ավելի բարձր գնային հայր չի ներկայացվել, ապա ածուրդավարը վիճակահանության միջոցով որոշում է հաղթող մասնակցին։

- **Ածուրդում գույացած գինը նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափը չգերազանցելու դեպքում վճարվում է ածուրդի արդյունքների մասին արձանագրության ստորագրման օրը, իսկ գերազանցելու դեպքում հաղթող մասնակիցը պարտավոր է մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել մասնակցի վկայականը (տոմս) և վճարել իր առաջարկած գնի հինգ տոկոսի չափով նախավճարը (ՀՀ օրենսդրությամբ սահմանված վճարման միջոցներով), որը սահմանված ժամկետում հեղազա վճարումների չկատարման դեպքում չի վերադարձվում և փոխանցվում է ՀՀ պետական բյուջե։ Գնորդը վճարումները կարող է կատարել նաև լիազորված անձի միջոցով։**

- Վճարման դեպքում՝ ածուրդի հաղթողի առաջարկած գնի հինգ տոկոսի չափով նախավճարի գումարը հաշվարկվում են հաղթողի (գնորդի) կողմից վճարման ենթակա գումարի մեջ և ածուրդի Կազմակերպչի կողմից փոխանցվում համապատասխան հաշվին։

- **Եթե ածուրդը համարվում է չկայացած հաղթող մասնակցի կողմից վճարումներ սահմանված ժամկետում չկատարվելու կամ ածուրդային արձանագրությունը չստորագրվելու պարճառով, ապա այդ դեպքերում հաջորդ ածուրդը կազմակերպվում է նույն պայմաններով՝ առանց մեկնարկային գնի նվազման։ Տվյալ մասնակիցը հայրաբարված գույքի նոր ածուրդին չի կարող մասնակցել։**

* **Ածուրդի Կազմակերպիչը նախավճարը, ածուրդը կայանալուց կամ չկայացած հայրաբարվելու պահից 1 աշխատանքային օրվա ընթացքում, վերադարձնում է ածուրդում չհաղթած մասնակիցներին՝ մասնակցության հայրում նշված հաշվետիրոջ հաշվեհամարին։**

*** Համաձայն Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի 2022թ. մարտի 31-ի թիվ 89-Ա հրամանի՝**

- Ածուրդը կանցկացվի դասական (գնի ավելացման) եղանակով։

- Առաջին ածուրդի ժամանակ չվաճառված գույքի վաճառքի նպատակով կազմակերպվում է նոր ածուրդ՝ գույքի վաճառքի մեկնարկային գինը նվազեցնելով վերջին ածուրդի մեկնարկային գնի 15 տոկոսի չափով։

- Ածուրդում հաղթող ճանաչված անձն արձանագրությունն ստորագրելու օրվանից 10 օրվա ընթացքում պարտավոր է վճարել լուրի (լուրերի) գինը։

- Գնորդը պարտավորվում է գույքի արժեքի որոշման համար նախադեսված գումարը վճարել գույքի գնի վճարման համար սահմանված ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գանձապետական թիվ 1 բաժանմունք՝ 900018002981 հաշվեհամարին։

- Գնորդը պարտավորվում է իր միջոցների հաշվին վճարել տրանսպորտային միջոցի պետական հաշվառման հետ կապված Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված գումարներն ու տուրքերը։

- Աճուրդի հաղթողի կողմից սահմանված ժամկետում վճարումները չկատարելու դեպքում մուծված նախավճարը չի վերադարձվում, աճուրդը համարվում է չկայացած և լուր (եր)-ը վաճառելու նպատակով կազմակերպվում է նոր աճուրդ՝ նույն պայմաններով:

* **Լրացուցիչ տեղեկություններ ստանալու և աճուրդի անցկացման կանոնակարգին ծանոթանալու համար կարող եք դիմել «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ, հասցե՝ ք.Երևան, Ջաքիյան 10 կամ զանգահարել՝ 010-52-63- 32 , 043-06-07-16 հեռախոսահամարներով:**

Ծանուցում.

«Հրապարակային սակարկությունների մասին» օրենքի 9-րդ հոդված.

1. Այն պայմանները և տեղեկությունները, որոնք նշվել են աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ, ենթակա չեն փոփոխման, բացառությամբ այն դեպքերի, երբ փոփոխություններ են տեղի ունեցել աճուրդով վաճառվելիք լուրի նկատմամբ սահմանափակումների մասով կամ փոփոխություններ են տեղի ունեցել՝ կապված լուրի ֆիզիկական վիճակի հետ, կամ աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ նախատեսվել է փոփոխությունների հնարավորությունը:

Սույն մասով նախատեսված դեպքում աճուրդի կազմակերպիչը պարտավոր է մինչև նախորդող երեք օրը կատարել աճուրդի մասին հրապարակային ծանուցման փոփոխություններ և լրացումներ (այսուհետ՝ հրապարակային ծանուցման փոփոխություն) այն ձևով, ինչպես կատարվել էր աճուրդի մասին հրապարակային ծանուցումը:

2. Եթե հրապարակային ծանուցման փոփոխությունը չի կատարվել սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերում և կարգով, ապա աճուրդի կազմակերպիչը կրում է մասնակիցների կրած իրական վնասների ռիսկը:

3. Աճուրդի մասին հրապարակային ծանուցում կատարելուց հետո թույլատրվում է հրապարակային ծանուցման փոփոխությամբ կատարել ցանկացած լրացում, եթե դրանով չեն փոփոխվում աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված էական պայմանները:

Քրեական օրենսգրքի 196 հոդված.

Հրապարակային սակարկությունների անցկացման կարգը չարամտորեն խախտելը, որը խոշոր վնաս է պատճառել գույքի սեփականատիրոջը, սակարկություններ կազմակերպողին, գնորդին կամ այլ տնտեսավարող սուբյեկտին՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

*Ուշադրություն. աճուրդի ընթացքը տեսաձայնագրվում է՝ դրա օրինականությունը ապահովելու նպատակով: